

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԱԲԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ**

**ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ**

**Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության սեղմագիր**

**ԵՐԵՎԱՆ-2012**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար  
դոկտոր,  
Մ.Ա.

պատմական գիտությունների  
պրոֆեսոր, Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Մուրադյան Մ. Ա.

պատմական գիտությունների թեկնածու,  
պրոֆեսոր Հովհաննիսյան Պ. Հ.

Առաջատար կազմակերպություն Կանադորի Հովի. Թունանյանի  
անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թ. հունիսի 13-ին, ժամը 14<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. հունիսի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

## ԱՅԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:** 19-րդ դարի 80-90-ական թվականներին հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագիտության զարգացման ընթացքը որոշակի նշանակություն ունեցավ հայ ժողովրդի՝ հանուն ազգային ինքնուրույնության պայքարի անշեղ ուղիների որոնման և իրացման ճանապարհին: Դրանք իրենց հրատապությունը պահպանեցին ոչ միայն հետագա մի քանի տասնամյակներին, այլև այժմեական են մեր օրերում, քանի որ հայրենիքը մնում է երկատված, հայկական հարցը չլուծված: Այս դիտակետից քննելով 19-րդ դարի վերջին քառորդի հայ պատմաքաղաքական մտքի մակարդակը, տեսնում ենք, որ համազգային կյանքի հակասությունների սրումը, օսմանյան և ռուսական կայսրություններում ազգային խնդիրների կարգավորիչ նորմերի բացակայությունը, ազգային-քաղաքական հեռանկարների անորոշությունը կանխելու նպատակով պահպանողական միտքը ներքին անհրաժեշտության մղումով հակվում էր անցյալի փորձին՝ ակամա բացարձակացնելով եկեղեցու և ազգայնության զգացումի դերը, ելնելով պատկերացումների այն վիճակից, ըստ որի վերոհիշյալ գործոնները պայմանավորում են ժողովրդի առանձնահատուկ հոգևոր կերտվածքը և դիմադրողականությունը պատմության բոլոր փուլերում: Դիտարկելով այս հայեցակարգը, հայ պատմահասարակական միտքը դրանով իսկ ազգահավաքմանը նպաստող գործոնների /այդ թվում նաև լեզվի գործոնի/ համակարգը և նրա լինելիությունը ձգտում էին դարձնել ազգապահպանման մշտատև գերակայության երևույթ: Նրանք ազգը դիտում են պատմական այնպիսի մի կատեգորիա, որը կրոնի և ավանդույթների ուժով ձեռք է բերում համախմբող միասնական գիտակցություն և հոգևոր առանձնահատուկ նկարագիր: Նորադարյան հայ հասարակական հոսանքների պատմությունն առանձնացնում է մտածական համակարգեր, որոնցից յուրաքանչյուրը յուրովի էր փորձում կանխագծել և լուծելի դարձնել ազգի համախմբման գործընթացը:

Քանի որ վերոհիշյալ հարցերը տակավին շարունակում են մնալ արդիական, ուստի դրանք ակամա դառնում են նաև ազգային անկախ պետականության հոգածության առարկա:

Թեմայի արդիականությունը կարևորում ենք նաև այն տեսանկյունից, որ հայ-ռուսական դարավոր առնչությունները ձեռք են բերել պետական հարաբերությունների այնպիսի մակարդակ, որ այսօր Ռուսաստանի Դաշնությունը համարվում է Հայաստանի Հանրապետության հուսալի դաշնակիցը:

Ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի բոլոր հոսանքներին գլխավորապես հուզել են այս խնդիրները: Ելնելով այդ իրողությունից, մենք գտնում ենք, որ այդ հարցերը մեր օրերում ևս ունեն գիտաճանաչողական նշանակություն, ուստի փորձել ենք դրանք դարձնել ուսումնասիրության առարկա:

**ԱՅԵՆԱԽՈՒԹՅԱՆ ՆՄԱՏԱԿՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:** Նորագույն ժամանակաշրջանի պատմահասարակագիտական միտքը հայ հասարակական հոսանքների միմյանց հանդուրժողական մղումների և հաճախ էլ շատ հարցերում իրարամերժ գոյակցության առավել առարկայական ուսումնասիրությամբ կարող է ամբողջացնել պատմագիտության զարգացման

պատմությունը՝ իր դեգերումների, աշխարհայացքային հիմքի և առաջադրված խնդիրների փոխակապակցության մեջ: Ուսումնասիրության ընթացքում առաջնորդվել ենք վերոհիշյալ հայեցակարգով, քանզի համոզված ենք, որ մտքի առաջընթացին սկանա սատարող հնի ու նորի բնապատմական անհրաժեշտությունը ներկայացնող ընդհարումն իր ամբողջության մեջ հետազոտելու գիտական արդի մակարդակն անհամեմատ գերծ է գաղափարական այս կամ այն ուղղությանը նախապատվություն տալու կողմնակալ մղումներից: Ժամանակաշրջանի տարատեսակ ու տարամերժ մտայնությունների համալիրն իր ամբողջության մեջ դիտարկելու գիտական շահախնդրությունը հավասարապես ընդունելի է ոչ միայն հասարակական այս կամ այն հոսանքի պատմականորեն ընդունված գոյությանը, այլև նրա ինքնահաստատման տեսական-գաղափարական, պատմագիտական մտածողության դրսևորումների հետազոտման անհրաժեշտությամբ:

19-րդ դարի 80-90-ական թվականներին նկատելի շրջաբերում է կատարվում հայ պատմագիտության բնագավառում: Մի կողմից անցյալի պատմամտածողության ավանդական հայեցակետերը հաղթահարվում են համեմատաբար առաջադեմ բուրժուական աշխարհայեցողությամբ, իսկ մյուս կողմից՝ ճեղքվում է պատմագրության նեղ, ազգային սահմանափակությունը և հայ ժողովրդի պատմությունը ներկայացվում է Մերձավոր Արևելքի ժողովուրդների պատմության հետ ավելի լայն, ընդգրկուն կապակցությունների մեջ: Պատմագիտության ամենամեծ նվաճումը, սակայն, հարուստ փաստական նյութի կուտակումն էր, վավերագրերի հայտնաբերումն ու քննությունը: Ազգային մշակույթի պատմության նախանձախնդիր մարդիկ թափանցում են արխիվները, գրադարանները, պրպտում ձեռագրերը, հաշվառում այն ամենը, ինչ ավանդել է հայ միտքը դարերի ընթացքում: Հայագիտության նվիրյալների ջանքերով 19-րդ դարի վերջին տասնամյակներին շարունակվում է հայ մշակույթի պատմությունը համակարգման ենթարկելու՝ 1850-60-ական թվականներից սկսված գործընթացը: Ազգային գոյության ճակատագրական ժամանակաշրջանը առանձնահատուկ սրությամբ էր առաջադրում պատմագիտական հետազոտությունների անհրաժեշտությունը: Պետք էր համաշխարհային հասարակական կարծիքի առաջ նորովի վավերացնել պատմական Հայաստանը, հայ ժողովրդի ազատագրության և անկախության իրավունքը հավաստել աշխարհագրական, ազգագրական, պետական ու քաղաքական գոյության փաստարկներով:

19-րդ դարի վերջին տասնամյակներում կարծես թե նոր իմաստ էր ստանում հայոց պատմական ճակատագրի գիտական հետազոտության խնդիրը. դարեր շարունակ արշավանքներից և բռնություններից տրոհված ազգի բեկորները ցրվել են աշխարհի տարբեր անկյունները, և թեև ամենուրեք եղել են ստեղծող ու շինարար, այնուամենայնիվ մատնվել են ծուլման անխուսափելի չարիքին: Հրամայական է դառնում հայ գաղթօջախների պատմության ուսումնասիրությունը<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս Ալիշան Ղ., Կամենեց, տարեգիրք հայոց Լեհաստանի և Ռումինիոյ, Վենետիկ, 1896:

Ուսումնասիրվում են ժողովրդի պատմության նորանոր հատվածներ, բացահայտվում նրա միջազգային կապերը, փորձ է արվում գիտականորեն համակարգելու պատմության ամբողջական ընթացքը<sup>2</sup>:

Ազատագրական շարժումների պատմական փորձը հայ միտքը մղում էր ազգային գոյության նոր կռվանների հայտնաբերմանը և այստեղ է, որ իմաստավորվում է պատմական Հայաստանի քաղաքակրթությունը: Եթե հայերը պետական և քաղաքական հզորությամբ շատ չեն ազդել համաշխարհային պատմության վրա, ապա բավականաչափ ներազդել են իրենց քաղաքակրթությամբ: Հայ մշակույթի պատմության ուսումնասիրությունն, այսպիսով, դառնում է ազգային-քաղաքական խնդիր: Հայ գրի և մատենագրության, պատմագրության, հայ մամուլի պատմության ուսումնասիրությունը միտում ուներ հայտնաբերելու ազգային գոյության մի նոր պայման ոգու և մտքի Հայաստանը: Ղևոնդ Ալիշանի, Սկրտիչ Էմինի, Քերովբե Պատկանյանի, Ստեփանոս Պալասանյանի, Գրիգոր Խալաթյանի, Գարեգին Սրվանձտյանի, Գյուլստ քահանա Աղանյանի և այլոց ուսումնասիրություններում և մատենագիտական աշխատություններում վեր են հանվում հայ մտավոր կյանքի պատմության արժեքները<sup>3</sup>:

Լայն հարցասիրություններով աչքի են ընկնում Կարապետ Եզյանն ու Ալ. Երիցյանը, որոնք առավելապես զբաղվել են նոր ժամանակաշրջանի պատմության հարցերով՝ արժեքավոր հետազոտություններ թողնելով հայ-ռուսական հարաբերությունների, հայ ազատագրական շարժումների, Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման, հայ մշակույթի պատմության վերաբերյալ<sup>4</sup>:

Պատմագիտության զարգացման մերօրյա բարձրակետից մենք անհրաժեշտաբար կարևորել ենք նաև ժամանակի պարբերական մամուլի դերը, ընդգծել թե այս կամ այն թերթը կամ ամսագիրը ազգի քաղաքական կողմնորոշման և պատմագիտական հայեցակետերի ինչպիսի կռվաններ է մերժել, ընդունել և նույնիսկ բացարձականացրել:

**ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՍՔԸ:** Ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք արխիվային վավերագրերի, փաստաթղթերի, մամուլի և գրականության պատմաքննական մեթոդով, որը հնարավորություն է տվել մեզ կարևորել 19-րդ դարի վերջին երկու տասնամյակների հայ հասարակական-քաղաքական մտքի ընդհանուր զարգացումը և արևելահայության ու արևմտահայության քաղաքական կացությունը:

<sup>2</sup> Գարագաշյան Ա., Քննական պատմություն հայոց, Մասն Ա-Գ, Թիֆլիս, 1895, Երիցյան Ալ., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIXդարում, Թիֆլիս, 1895, Պալասանյան Ստ., Պատմություն հայոց. սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1890:

<sup>3</sup> Ալիշան Ղ., Երկեր, Երևան, 1981, Էմին Մ., Վեպք հնոյ Հայաստանի, Մոսկվա, 1850, Պալասանյան Ստ., Պատմություն հայոց, Թիֆլիս, 1902, Խալաթյանց Գ., Նամակ առ խմբագրութիւն Եղիշէի աղբիւրների առթիւ, Վիեննա, 1895, Սրվանձտյանց Գ., Գրոց ու բրոց, Կ.Պոլիս, 1910, Գյուլստ ք. Աղանյան, Դիվան հայոց պատմության, գիրք Ա-Բ, Թիֆլիս, 1893, Патканов К.П.Ванские надписи и значение их для истории Передней Азии, СПб, 1881:

<sup>4</sup> Տե՛ս Երիցյան Ալ., Վենետիկի Միսիթարյանք, Թիֆլիս, 1883, Գր. Արծրունու և նրա կյանքի 25 տարվա գրական գործունեության առթիվ, Թիֆլիս, 1890, Эзов Г., Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած է հայ պատմագիտության 19-րդ դարի 80-90-ական թվականների պատմագիտական մտքի անկողմնակալ և անաչառ հետազոտության սկզբունքը:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:**

Ատենախոսությունն ընդգրկում է 19-րդ դարի վերջին քառորդը:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅՅՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Ատենախոսության գլուխներում փորձ է կատարվել փաստական նյութի և պատմաբանական մեթոդի զուգակցման հենքի վրա լրացնել 19-րդ դարի վերջին քառորդի հայ պատմաբանների պատմագիտական հայացքների լուսաբանման բնագավառում մինչև այժմ գոյություն ունեցող տեսանելի բացը: 19-րդ դարի վերջին տասնամյակների հայ պատմագիտության զարգացման ընթացքում նկատելի է մի օրինաչափություն, որն ընդհանրապես բնորոշ է իր զարգացման մակարդակով, այսպես ասած, «ուշացած ժողովուրդների» մտավոր գործունեությանը: Եթե օրինաչափորեն առաջադիմած ժողովուրդները հարյուրամյակների ընթացքում անցել են հասարակական տնտեսակարգերի բնական հաջորդափոխությունը, մինչդեռ «ուշացած ժողովուրդների» մտքի մշակները փորձում էին համատեղել այն, ինչ առաջադիմած ազգերը յուրացրել և հաղթահարել են պատմական զարգացման երկարատև գործընթացներում: 19-րդ դարավերջի հայ նշանավոր պատմաբանները /Ք. Պատկանյան, Ա. Գալազաշյան, Ստ. Պալասանյան, Ալ. Երիցյան, Կ. Եզյան և ուրիշներ/ փորձում էին ըմբռնել ազգի առաջընթացի օրինաչափությունները և այս առումով զրեթե հակասական չէր թվում ինչպես նախորդ, այնպես էլ իրենց ժամանակի պատմաբանական ուսմունքների յուրացումն ու իրենց ազգային մտածողության միասնական համակարգում դրանց համատեղումը: Չանտեսելով ինչպես ռուսական, այնպես էլ եվրոպական պատմագիտական մտքի ազդեցությունը, ատենախոսության մեջ ցույց ենք տվել, որ հայ պատմագիտական մտքի առաջընթացը կատարվել է գլխավորապես պատմագիտական սեփական ազգային ներուժի, ավանդույթների և արդիականության պարզած խորհրդի կարևորման հենքի վրա: Վերոհիշյալ սկզբունքները տեսական, մեթոդաբանական նշանակություն ունեն ոչ միայն այսօրվա, այլև ապագա հայ պատմագիտական մտքի առաջընթացի համար: Հատկանշական է, օրինակ, որ հայ ժողովրդի պատմության գիտական պարբերացման հարցում Անտոն /Մադաթիա/ Գալազաշյանը իր «Քննական պատմություն հայոց» աշխատության մեջ, հիմք ընդունելով զուտ ազգային պատմական մտայնությունը, հայոց պատմությունը բաժանել է երկու պատմական հիմնական շրջանի՝ նախնականի, որն սկսվում է հնագույն ժամանակներից և շարունակվում է մինչև Տիգրան Երկրորդը, և պատմականի՝ Տիգրան Երկրորդից մինչև իր ապրած ժամանակը<sup>5</sup>: Դյուրին է նկատել, որ նման պարբերացումը ճիշտ չի արտացոլում հայ ժողովրդի անցած ճանապարհի պատկերը:

Պրոֆեսոր Գր. Խալաթյանը, ելնելով եվրոպական և ռուսական պատմագիտության մեջ ընդունված պարբերացումից, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի սոցիալ-քաղաքական և պատմամշակութային առանձնահատկությունները, հայոց պատմությունը բաժանել է երեք շրջանի՝

<sup>5</sup> Տե՛ս Գալազաշյան Ա., Քննական պատմություն հայոց, մասն. Ա., Թիֆլիս, 1895, էջ 7:

հին, միջին և նոր: Սակայն, նա ևս, ինչպես և իր նախորդները, հայ ժողովրդի պատմության պարբերացման հիմքում դրել է արտաքին քաղաքական և կրոնական գործոնները, որոնք իրապես գիտական չեն: Ինչ խոսք, չէինք կարող անտեսել, որ 19-րդ դարի վերջին քառորդի հայ պատմագիտական միտքը տարբերվում էր նախորդ տասնամյակներից ինչպես իր բարձրացրած հիմնահարցերով, այնպես էլ դրանց գիտական լուծումներով:

Ատենախոսության մեջ կարևորել ենք մի իրողություն ևս. 19-րդ դարավերջի չորրորդ քառորդը պատմագիտության մեջ նշանավորվում է որպես պահպանողականության և ազատականության անհակամարտ գոյակցության փուլ, հանգամանք, որը պայմանավորված էր տնտեսական-հասարակական զարգացման առանձնահատկություններով, որոնք տակավին անշեղ էին արտացոլում համազգային մտքի ընդհանուր ուղղությունն ու բովանդակությունը: Պատահական չէր, որ այդ ժամանակաշրջանում տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի զարգացումը համարյա նույն ոչ ընդդիմադիր հարցերն էր առաջադրում պատմագիտական մտքի ուղղություններին: Հայ պատմագիտության պահպանողական և լիբերալ ուղղություններն ըստ էության միակարծիք դրական դիրքորոշում ունեին նաև հայ-ռուսական հարաբերությունների և Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման հիմնահարցերի լուսաբանման խնդրում: Միաժամանակ ցույց ենք տվել, որ հայ պատմագիտության առաջատար ներկայացուցիչներն իրենց աշխատություններում, «Մշակ», «Փորձ», «Արձագանք», «Նոր դար», և այլ պարբերականներում տպագրված պատմահրապարակախոսական հոդվածներում իրատեսորեն են գնահատել Ռուսաստանի դերը՝ իրենց հայեցակետային դրույթներով գրեթե չհեռանալով Հայկական հարցի լուծման ռուսական քաղաքականության ավանդական ուղեգծից:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Նոր պատմության ու Հայկական հարցի և հայոց ցեղասպանության բաժինների կողմից: Ուսումնասիրության հիմնական խնդիրները լուսաբանվել են հեղինակի հրատարակած 4 հոդվածներում:

**ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ /ԱՂՔՅՈՒՆԵՐԻ ԵՎ ԳՐՎԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/:** Թեմայի վերաբերյալ կատարվել են մի շարք ուսումնասիրություններ, որոնք քննելով կարևորել ենք զարգացման միտումների գիտագաղափարական հենքը, կատարել ընդհանրացումներ՝ հանդգնած լինելով, որ նյութի ըստ լայնքի ու խորքի հետազոտությունն ինքնին ի հայտ կբերի չյուրացված նոր էջեր՝ հարստացնելով պատմագիտության բովանդակությունը:

Ատենախոսության մեջ օգտագործվել են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, Հայաստանի ազգային արխիվի, Գրականության և արվեստի թանգարանի փաստաթղթերը<sup>6</sup>, որոնց ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի խնդրի լուսաբանման համար:

19-րդ դարի վերջին տասնամյակների հայ պատմագիտության զարգացման միտումները լուսաբանելիս նորագույն ժամանակաշրջանի

---

<sup>6</sup> Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր N3755, էջ 4բ-5բ, Հայաստանի ազգային արխիվ, Ֆ.56, ց.1, գ.24, ք.10, Գրականության և արվեստի թանգարան, Գյուտ Արամյանի ֆոնդ, գ.455, Առաքմյանի ֆոնդ, 1 բաժին, գ.2835, Ռ.Պատկանյանի ֆոնդ, ք.270, քերթ 132ա, Պ.Սիմոնյանի ֆոնդ, գ.68բ, էջ89:

պատմաբաններից՝ Աշ. Գովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկհատորանոց աշխատությունը<sup>7</sup> առանձնանում է նրանով, որ հեղինակը բազմակողմանիորեն հետազոտել է վաղ միջնադարից մինչև XVIII դարի սկզբներն ընկած ժամանակաշրջանի հայ ազատագրական շարժումների պատմության կարևոր բնագավառներից մեկի՝ ազատագրական մտքի պատմությունը:

XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական հոսանքների պատմության գիտական ուսումնասիրության գործում կարևոր նշանակություն ունի Վ. Ռշտունու «Հայ հասարակական հոսանքների պատմությունից» աշխատությունը<sup>8</sup>: Արևելահայ պարբերական մամուլի ընծեռած առատ նյութերի հիման վրա շարադրված է արևելահայ հասարակական հոսանքների պատմությունը:

Ա. Համբարյանի «Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ուղիների մասին» մենագրության<sup>9</sup> մեջ հանգամանորեն վերլուծվել են արևմտահայ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների տեսակետները արևմտահայերի ազատագրության հարցում: Ըստ էության նույն խնդիրներին է անդրադարձել նաև Վ. Ավետիսյանը «Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը» աշխատության մեջ<sup>10</sup>:

Հայ-ռուսական հարաբերությունների պատմության ուսումնասիրության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի Վ. Պարսամյանի «Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում» աշխատությունը<sup>11</sup>: Հեղինակը անդրադառնում է XVIII դարում ձևավորված հայ-ռուսական քաղաքական հարաբերություններին, բնութագրում հայ ազատագրական շարժման այն գործիչներին, որոնք հայ ժողովրդի ազատագրությունը կապում էին Ռուսաստանի քաղաքականության հետ:

XIX դարի երկրորդ կեսի հայ ազատագրական պայքարի պատմության գիտական ուսումնասիրության գործում արժեքավոր է Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870թթ.» մենագրությունը<sup>12</sup>: Արխիվային նյութերի և աղբյուրների հիման վրա ցույց է տրված Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը 1850-1870-ական թվականներին և հանգամանորեն քննության է առնված թուրքական իշխանության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի պատմությունը:

Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը 1870-1880-ական թվականներին բազմակողմանիորեն և խորագնին հետազոտվել է Զ. Կիրակոսյանի «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը /XIX դարի

<sup>7</sup> Գովհաննիսյան Աշ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, երկրորդ, Երևան, 1957, 1959:

<sup>8</sup> Ռշտունի Վ., Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956:

<sup>9</sup> Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, 1990:

<sup>10</sup> Ավետիսյան Վ., Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976:

<sup>11</sup> Պարսամյան Վ., Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Երևան, 1940:

<sup>12</sup> Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870-ական թվականներին, Երևան, 1955:



70-ական թթ./» և «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը /XIX դարի 80-ական թթ./» երկհատոր արժեքավոր մենագրության մեջ<sup>13</sup>: Մենագրության առաջին գրքում վերլուծվում է Արևելյան հարցի պատմությունը, այնուհետև ներկայացնում Հայկական հարցի առաջացման ու զարգացման պատմությունը: Երկրորդ գիրքն ընդգրկում է XIX դարի 80-ական թվականները, որը հեղինակը բնութագրում է, որպես հույսի ու հուսախաբության պայքարի ու նախապատրաստությունների ժամանակաշրջան:

Թեմայի ուսումնասիրության տեսանկյունից կարևոր է Մ. Մխիթարյանի «XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից» մենագրությունը<sup>14</sup>: Որտեղ հեղինակը «Փորձ» և «Արձագանք» պարբերականների էջերում՝ հայ հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին նվիրված հարցերը ենթարկել է համակողմանի ուսումնասիրության:

Ուսումնասիրությունների շարքում հարկ է առանձնացնել նաև Ն. Սարուխանյանի «Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ» և «Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ» մենագրությունները<sup>15</sup>, ինչպես նաև Է. Կոստանդյանի «Գարեգին Սրվանձտյանց» մենագրությունը<sup>16</sup>: Վերոհիշյալ հեղինակները մեզ համար ոչ միայն գիտական, այլև գիտամեթոդական ուղեցույցի դեր են կատարել:

#### **ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՈՒՄԸ:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Ուսումնասիրության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 199 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, ուսումնասիրվածության աստիճանը, տրվել է թեմային վերաբերող սկզբնաղբյուրների ու գրականության տեսությունը:

*Առաջին գլխում՝* «Հայ հիին և միջնադարյան պատմության հիմնահարցերի լուսաբանումը», քննարկվում են հիին և միջնադարյան պատմության հիմնահարցերին նվիրված Ղևոնդ Ալիշանի, Գարեգին Սրվանձտյանցի, Մկրտիչ Էմինի, Անտոն /Մադաթիա/ Գարագաշյանի, Քերովբե Պատկանյանի, Գրիգոր Խալաթյանցի, Ստեփանոս Պալասանյանի, Գյուտ քահանա Աղանյանի աշխատությունները, ինչպես նաև տրվում է ժամանակի հայ պարբերական մամուլում տպագրված պատմագիտական հոդվածների

---

<sup>13</sup> Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը /XIX դարի 70-ական թթ./, Երևան, 1978թ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը /XIX դարի 80-ական թթ./, Երևան, 1980:

<sup>14</sup> Մխիթարյան Մ., XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Երևան, 1976:

<sup>15</sup> Սարուխանյան Ն., Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ, Երևան, 1971, Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, 1997:

<sup>16</sup> Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց, Երևան, 1979:

քննական վերլուծությունը: Պատմագիտության մեթոդի և տեսության քարոզչության առումով 19-րդ դարի վերջին տասնամյակները շատ արգասավոր եղան: Այս ժամանակաշրջանի հայտնի պատմաբանները զբաղված էին հին և միջնադարյան պատմության հիմնահարցերը վերաիմաստավորելու գերագույն խնդրով: Նրանք կանգնած էին քննական պատմագիտության սկզբունքային դիրքերում: Յուրացնելով եվրոպական պատմագիտության մեթոդաբանությունը, հայ պատմաբանները հետազոտում էին հայկական և օտար աղբյուրներ, կատարում պատմա-համեմատական զուգահեռներ և առավել շատ հենվելով հայկական նյութի վրա՝ կատարում հայագիտության համար վերջնական եզրահանգումներ: Յույց է տրվում հայ ժողովրդի ազգային-քաղաքական արդիական շահախնդրությունից բխող հին ու միջնադարյան պատմության դասերի անշեղ գնահատման անհրաժեշտության հրամայականը:

*Երկրորդ գլուխը՝ «Չայ-ռուսական հարաբերությունների պատմության հետազոտությունը»* բաղկացած է երկու ենթագլխից:

**Առաջին ենթագլխում՝ «Չայ-ռուսական հարաբերությունների սկզբնավորման պատմության լուսաբանումը»,** վերլուծության է ենթարկված հայ-ռուսական հարաբերությունների սկզբնավորման պատմությունը: Չայ ժողովրդի վերջին հարյուրամյակների պատմությունը սերտորեն կապված է Ռուսաստանի հետ: Չայերի ռուսական կողմնորոշումը գործնական ու բանուկ ուղիների վրա դրվեց հենց այդ հարյուրամյակի նախաշեմին և բնականաբար որոշակի արտահայտություն գտավ 19-րդ դարի 70-ական թվականների հայ պատմագիտության էջերում: «Փորձ» պարբերականի 1877-1878թթ. երկրորդ համարում տպագրված «Չայերի մասնակցությունը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետությունների մեջ» ուշագրավ հոդվածում Ալեքսանդր Երիցյանը առաջին անգամ հայ պատմագիտության մեջ գիտականորեն ձևակերպեց, որ «Չայերը Ռուսաստանի հետ հաղորդակցություններ ունեին դեռ ժՐ դարից առաջ, բայց այս յարաբերությունները միմիայն առևտրական էին: Ամենքից յառաջ Մեծն Պետրոսը ուշադրություն դարձրեց հայերի վերայ. նա հասկացաւ, որ Չայոց ազգի ձեռքով կարելի է ռուսաց իշխանութիւնը Անդրկովկասումը հաստատել»<sup>17</sup>:

Չայաստանի ազատագրության XVIII դարի երկրորդ նշանավոր ծրագիրը, որը սերտորեն առնչվում է Ռուսաստանի օգնության հետ, ըստ Գ. Աղանյանի պատկանում է Յոզսեփ Ենիմի<sup>18</sup>: Ռուսաստանի օգնությամբ Չայաստանի ազատագրման մի նոր ծրագիր հրապարակ է գալիս 1769թ. կեսերին, որը կապվում է նշանավոր վաճառական Մովսես Սարաֆյանի անվան հետ: Ծրագրի հեղինակը փորձել է հիմնավորել, որ Չայաստանի ազատագրումը լիովին հնարավոր է Ռուսաստանի, Վրաստանի և հայերի համատեղ ռազմական ջանքերի շնորհիվ: 18-րդ դարի վերջին քառորդին Ռուսաստանի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչների մեջ աչքի ընկան ռուսահայ թեմի առաջնորդ Յոզսեփ Արղությանը /1743-1801/ և հայ մեծահարուստ Յովհաննես Լազարյանը/1735-1800/: Այս գործիչները աշխույժ

<sup>17</sup> Երիցյան Ա., Չայերի մասնակցությունը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետությունների մեջ, «Փորձ», 1877-1878, №1, էջ 367:

<sup>18</sup> Տե՛ս «Դիվան հայոց պատմության» գիրք, Թիֆլիս, 1894, էջ 6իք

գործունեությունն ծավալեցին 1774թ. Քյուչուկ-Կայնարջիի հաշտության պայմանագրի կնքումից հետո, երբ ռուսական կառավարող շրջաններում ուժեղացավ դեպի Անդրկովկաս շարժվելու մտադրությունը: Անգամ հանձնարարվում է մեծ գորավար Ա.Վ. Սուվորովին մեկնել Աստրախան և մախապատրաստել արշավանք դեպի Անդրկովկաս:

**Երկրորդ ենթագլխում`** «Արևելյան Հայաստանի` Ռուսաստանին միացման հիմնահարցը» ներկայացված է Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, այն դիտելով որպես պատմական կարևոր իրադարձություն: Մեծագույն այդ իրադարձությունը խորհրդածությունների և մտորումների առարկա դարձավ ոչ միայն ժամանակակիցների, այլև հետագա հայ հասարակական-քաղաքական մտքի ու պատմագիտության համար: Այդ հիմնահարցի գիտական համակողմանի մշակման ու լուսաբանման գործում մեծ վաստակ ունի նշանավոր պատմաբան, հնագետ, հասարակական գործիչ Ալեքսանդր Երիցյանը /1841-1902/: Ալ. Երիցյանի այնպիսի աշխատություններ, ինչպիսիք են «Ամենայն հայոցկաթողիկոսությունը և Կովկասի Հայք ժժ դարում» /երկհատորյակ, Թիֆլիս, 1894,1895/, «Նյութեր Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի կենսագրության» /Թիֆլիս, 1899/, «Հայերի մասնակցությունը Ռուսաստանի` Անդրկովկասում արած տիրապետության մեջ» /«Փորձ», 1877-1878, №1, 2/, «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի» /հ. 1, Թիֆլիս, 1898/ և այլն: Այս աշխատություններն այսօր էլ պատմագիտական անանց արժեքներ են: Դրանք մաս վկա են այն իրողության, որ 19-րդ դարի վերջին քառորդի հայ հեղինակներից ոչ ոք հայ-ռուսական նորադարյան քաղաքական հարաբերությունների, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման հիմնահարցերն այնպիսի լայն քննարկման առարկա չի դարձրել, որքան Ալ. Երիցյանը:

Արևելյան Հայաստանի` Ռուսաստանին միացման հիմնահարցի նկատմամբ հետաքրքրությունն ուժեղացավ 19-րդ դարի 70-80-ական թվականներին, հատկապես հայ լիբերալ հոսանքի ներկայացուցիչների շրջանում: Եվ դա բնական էր: Կապիտալիզմի զարգացումը փոխակերպում էր հասարակության դիմապատկերը, առաջ բերում նոր տեղաշարժեր տնտեսության, կենցաղի և բարքերի մեջ, նախադրյալներ ստեղծում բուրժուական ապրելակերպի կայացման համար: Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման հիմնահարցն այս տեսակետից առավել պոզիտիվ ելակետից էր քննում Գրիգոր Արծրունին: Իր գործունեության հենց սկզբից Գր. Արծրունին գտն էր Ռուսաստանի վարած քաղաքականությունից:

«Արդարև, մենք, Կովկասի բնակիչներս, ինչ դրության մեջ էինք ռուս տերությունից առաջ: Ռուսական տերությունը մեզ համար զիմնագիաներ չինեց, մեզ ճանապարհ տվեց համալսարաններ մտնելու: Մեր երկրի արդյունքները ճանապարհների պակասության պատճառով մեր երկրից չէին դուրս գալիս: Ռուսիայի տերությունը մեզ ճանապարհներ չինեց, այժմ երկաթուղիներ կշինե: Արվեստը, վաճառականությունը, երկրագործությունը ի՞նչ դրության մեջ էին: Վրաստանում նոքա ապահովացրած չէին չերքեզների կողմից, իսկ Հայաստանի կողմերում մահմեդականությունը յուր անշարժությամբ արգելք էր դնում ամեն աշխատանքի տարածմանը: Ռուսիայի տերությանն ենք պարտական, որ այժմ մեր երկրում աշխատանքը ապահովացրած է և կարող է

առաջ գնալ: Մեզանից է կախված այժմ օգուտ քաղել մեզ տված բարերարություններից և աշխատել լավացնել»<sup>19</sup>:

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման հարցի և հայ ժողովրդի ազգային-քաղաքական խնդիրների մասին մտածողության ուրույն ընթացքի կրող էր արևմտահայ դեմոկրատական գործիչ, գրող, հրապարակախոս, բանասեր և պատմագետ Մատթեոս Մամուրյանը /1830-1901/: Նա մերժում էր կովկասահայ լիբերալների ռուսական կողմնորոշումը և պաշտպանության տակ առնում ցարիզմի կովկասյան քաղաքականության քննադատական ուղեգիծը: «Հայերը, - գրել է Մ. Մամուրյանը, - ցորենն ու ալիւրը, արհմն ու կեանքը չէր խնայեր օտար զինուորիկներուն, որ իբրեւ փրկութեան հրեշտակ իրեն կը ներկայանար... Հայ քաղաքացին իր տունը, մեծատունն իր գանձը, գիւղացին իր կալն ու կալորայն, կրօնաւորն իր վանքը, պատանին իր հոգին, լեռնականն իր բազուկները կը բանար ռուսաց առջև ու իբրեւ ազատարար զանոնք կընդունէր»<sup>20</sup>: Քննադատության ենթարկելով ցարիզմի գաղութային քաղաքականությունը, Մ. Մամուրյանը, սակայն, քաղաքական ապակողմնորոշման էր ենթարկում 1870-ական թվականների իր ժամանակակցին, երբ համեմատելով ցարական մտրակը պարսկական խարազանի և թուրքական թակի հետ՝ գրում էր, թե դրանցից «առաջինը կսպանէ, երկրորդը կանդամալուծէ, երրորդը կգրգռէ»<sup>21</sup>: Ուրախալի է, սակայն, որ ցարիզմի կովկասյան քաղաքականությունից խիստ դժգոհ Մ. Մամուրյանը չէր անտեսում մի կարևոր իրողություն. այն է՝ Ռուսական կայսրության գաղութային քաղաքականությունը չէր կապում Արևելքի ժողովուրդների հանդեպ ռուս ժողովրդի կատարելիք առաջադիմական դերի հետ:

19-րդ դարի վերջին քառորդի հայ հեղինակները բարձր են գնահատել 1820-ական թվականների պարսկահայերի գաղթի մշանակությունը ազգի բնօրրան՝ Արարատյան երկրի շենացման գործում: Պատմության մեջ հայոց գաղթն ընդհանրապես մերժող Պերճ Պռոշյանը՝ խիստ վերապահությամբ էր խոսում պարսկահայերի «մեծ տունդարձի» մասին: «... Հազար անեծքների ու մեղադրանքների են արժան, - գրում է նա, - Հայաստանից օտար երկիր և Հայաստանից Հայաստան գաղթեցնողները: Թուրք ու նախատինք այդպիսիների հիշատակին»<sup>22</sup>: Անժխտելի է, այդ գաղթն ունեցավ այն հետևանքը, որ Ատրպատական նահանգի բնակավայրերն ավերակ դարձան և «հայի արյուն քրտինքով ծաղկեցրած ու աճեցրած այգիները գայլերի ու գազանների ճանկն ընկավ... Երանի թե կամ չէին գաղթել կամ բուլորն ձգեին հեռանային իրենց երկրից»<sup>23</sup>:

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման հիմնահարցը երկրի ու ժողովրդի տնտեսական ու մշակութային զարգացման դիտակետից էր քննում նաև Ստ. Պալասանյանը: Վերջինս ևս ազատ չէր քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ ռուս ցարերի քրիստոնեասիրությունն ու անկեղծությունը գերազնահատելուց, ինչպես Կ. Եզյանն ու Ալ. Երիցյանը:

<sup>19</sup> Արծրունի Գր. Աշխատությունները, հտ. առաջին, Թիֆլիս, 1904, էջ 86-87:

<sup>20</sup> Մամուրյան Մ., Սև լեռին մարդը, Աթենք, 1932, էջ 124:

<sup>21</sup> Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Երևան, 1955, տես նաև՝ Մ. Մամուրյան, Անգղիական նամակների կամ հայու մը ճակատագիրը, Զմյուռնիա, 1881, էջ 215:

<sup>22</sup> Պռոշյան Պ., Շահեն, Թիֆլիս, 1883, էջ 30:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 31:

«Աղէքսանդր Ա սրտանց ցանկանում էր, - գրել է Ստ. Պալասանյանը, - յոյներին ազատել օսմանեան իշխանութիւնից: Սրբազան դաշնակցութեան խորհրդաւոր ժողովներուն արդէն խօսք էր եղել յոյների, ինչպէս նաև ուրիշ քրիստոնէայ ժողովողների անկախութեան մասին...»<sup>24</sup>:

Հայ ժողովրդի կյանքում կատարված շրջադարձային այդ իրողությունը 1890-ական թվականներին բարձր են գնահատել նաև Գյուտ քահանա Աղանյանը, հրապարակախոս Ավ. Արասխանյանը, գրող, պատմաբան և հրապարակախոս Արշ. Զոպանյանը և ուրիշներ:

Այսպիսով, ռուսական տիրապետության դրական նշանակությունն արձանագրող 19-րդ դարի վերջին քառորդի հայ պատմագիտության և հասարակական մտքի ամենատարբեր հոսանքների գրեթե բոլոր ներկայացուցիչներն էլ ոչ միայն չէին անտեսում, այլև ընդգծում էին անձի ու գույքի ապահովությունը, մեծարում էին լուսավորությունն ու քաղաքակրթությունը, քարոզում ու գոյության իրավունքի կռվան պարզում այն ամենն, ինչը ապահովում էր ռուսական տիրապետությունը: Ցարական արքունիքը չբավարարեց, և չէր էլ կարող բավարարել հայ ազգային-քաղաքական մտքի փայփայած անկախության կամ ինքնավարության ձգտող ակնկալիքները: Սակայն, իրողություն է և այն, որ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին սկիզբ դրեց հայոց պատմության կարևորագույն փուլերից մեկին և առաջընթաց դեր կատարեց նրա հետագա գոյատևման համար: Առաջադիմական այդ իրողությունից բխող առաջին հետևանքն այն էր, որ ռուսական տիրապետության ներքո անցած հայությունը փրկվեց նախ և առաջ ֆիզիկական բնաջնջման հնարավոր վտանգից և պայմաններ ստեղծվեցին հայությանը համախմբելու, նրա նյութական և հոգևոր ուժերը միավորելու մեկ միասնական քրիստոնյա պետության մեջ, ուր չկար ընդգծված և բացարձակ կրոնական անհանդուրժողականություն: Արևելյան Հայաստանի միացումից հետո վերաբնակեցվեց երկրամասը, ստեղծվեց համեմատաբար ամբողջական՝ կենտրոնացված ազգային զանգված, բնաշխարհի էթնիկական կազմը դարձավ հայկական: Արևելահայության համախմբումը աստիճանաբար ձևավորեց սեփական ազգային ներուժ, որը անտարակույս զարկ էր տալու ազգային ինքնագիտակցության վերելքին:

**Երրորդ գլուխը** «Հայ հասարակական-քաղաքական և պատմագիտական միտքը հայկական հարցի մասին», բաղկացած է երկու ենթագլխից:

**Առաջին ենթագլխում**՝ «Հայ հասարակական-քաղաքական հոսանքների դիրքորոշումը», աշխատել ենք փաստերի վրա խարսխված հայեցակետերի համադրմամբ և հակադրմամբ, հաճախ իրար բացասող տեսակետների քննությամբ ցույց տալ, որ հայ ժողովրդի նոր պատմության ոչ մի հիմնահարց թերևս այնքան խճճված չէ հակասական, մակերեսային տեսակետների առատությամբ, որքան Հայկական հարցի տեսությունն ու պատմությունը 19-րդ դարի վերջին քառորդին: Թուրք նշանավոր բարենորոգիչներից մեկը, երբեմնի մեծ վեզիր և արտաքին գործերի նախարար Ֆուադ փաշան 1869 թվականին Աբդուլ Ազիզ սուլթանին՝ Աբդուլ Համիդի հորը, գրած իր քաղաքական կտակում խորհուրդ էր տալիս արտաքին քաղաքականության ճակատում՝ հարևաններից ետ չմնալու և կայսրության

<sup>24</sup> Պալասանյան Ստ., Հունաստանի անկախությունը, «Փորձ», 1877-1878, №2, էջ 197:

տրոհման գարհուրելի աղետի իրական վտանգը կանխելու համար մերձենալ եվրոպային և մեծ տերությունների օգնության վրա հենվելով չեզոքացնել Ռուսաստանին, ներքին քաղաքականության բնագավառում՝ «... մեր բոլոր ջանքերը պետք է ձգտեն մի նպատակի միայն՝ մեր ցեղերի համաձուլումը: Առանց այս համաձուլման մեր կայսրության միությունը ինձ անկարելի է թվում»: Ֆուլադ փաշան մեծապետական օսմանիզմի դիրքերից ելնելով, գնահատում է առանձին հպատակ ժողովուրդների պատմական դերը և յուրովի տալիս է նրանց նկատմամբ կիրառվելիք քաղաքականության իր տեսակետները:

«Մասնավորապես հայերը, - կարդում ենք Ֆուլադ փաշայի «Կտակում», - հակումն են ցոյց տալիս դեպի ոտնձգութիւն, և խելացութիւն է նրանց եռանդը չափավորել, ասպարեզ տալով միայն նրանց, որոնք պարկեշտօրէն ընդունում են մեր կայսրութեան միավոր սկզբունքը»<sup>25</sup>:

Մեծ վեզիրի «քաղաքական կտակը» պետք է դիտել ոչ միայն որպես գործունեության ծրագիր, այլև որոշակի կացության ամփոփում:

Ազգային-պահպանողական արևելահայ հոսանքի հիմնական պարբերականները /«Կռունկ հայոց աշխարհին» /1860-1863/, «Մեղու հայաստանի» /1863-1886/, «Փորձ» /1876-1881/, «Արձագանք» /1882-1898/, «Նոր դար» /1884-1906/ դարձել էին 19-րդ դարի երկրորդ կեսի հայկական կյանքի անդրադարձները, իրենց էջերում արձանագրում էին պատմագիտական մտքի վիճակը, նպաստում էին ոչ միայն արևելահայ կյանքի առաջընթացին, այլև համակողմանի քննարկում էին արևմտահայության կենսական խնդիրները:

Հայկական հարցի լուսաբանմանը մեծ տեղ է հատկացրել Գրիգոր Արծրունին, նրա խմբագրած «Մշակ» թերթը /1872-1892/:

1876թ. գրած «Արևելյան հարց» /ռուսերեն/ գրքում Գր. Արծրունին համոզում էր, որ «Արևելեան խնդիրը սլավեանութեան և ուղղափառութեան խնդիր չէ միայն, նա մինչև անգամ միմիայն քրիստոնեութեան խնդիր չէ, այլ աւելի՝ նա քաղաքակրթութեան խնդիր է, քաղաքակրթական ցեղերի՝ բարբարոսութեան դէմ պատերազմի խնդիր է - արիական և սեմիտական ցեղերի պատերազմի խնդիրէ թուրանական ցեղի դէմ»<sup>26</sup>: Ռուս-թուրքական պատերազմի նախօրէին Գր. Արծրունին ձայնակցում էր ռուսական լիբերալ-բուրժուական մամուլի՝ Թուրքիային անմիջապէս պատերազմ հայտարարելու վերաբերյալ կառավարությանն ուղղված կոչերին: Արևմտյան Հայաստանի ազատագրման միակ ճանապարհը տեսնելով զինված պայքարի մեջ, Գր. Արծրունին դրան նպաստող առաջատար գործոն էր համարում Ռուսաստանի արևելյան քաղաքականության հաջողությունը:

Հայ ազգային-ազատագրական շարժումների և Հայկական հարցի առաջադրած խնդիրների պատասխանների որոնմանն ու լուծմանը իր ողջ կյանքը նվիրեց մեծ պատմավիպասան և հրապարակախոս Ռաֆֆին, որը 19-րդ դարի հատկապես 70-80-ական թվականներին իր վրա բևեռեց ժամանակաշրջանի հայ հասարակայնության ուշադրությունը, ըստ էության դառնալով ազգային գոյապայքարի գաղափարախոսը: Հրապարակախոսը մերկացնում էր թուրքական քաղաքականության խարդավանքները,

<sup>25</sup> Ֆուլադ փաշայի քաղաքական կտակը, «Արօր», Թիֆլիս, 1910, №6-7, հունիս-հուլիս, էջ 185:

<sup>26</sup> «Մշակ», 1877, №56, օգոստոսի 4, “Восточный вопрос” գրքի հայերեն թարգմանությունը տպագրվել է «Մշակի» մշված և հետագա համարներում:

բացահայտում պատրանքային այն մտածողությունը, որ փրկության ուղիներ էր որոնում Օսմանյան կայսրությունում: «Այդ ցնորք է, - գրում էր Րաֆֆին, - թուրքը այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավագակ և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա... Մենք ունենք պատմություն, 850 տարվա պատմություն, թե ինչպես է մեզ հետ վարվել թուրքը: Նրա ամեն մի տողը արյունով և արտասուքով է գրված: Ով որ ուրանում է պատմությունը, առաջ ինքն է կնքում իր դատապարտության դատակնիքը»<sup>27</sup>: Ոչ միայն Գր. Արծրունին, այլև Րաֆֆին, դժվարությամբ, բայց համակերպվեց ցարիզմի քաղաքական նոր ընթացքին: 1880-ական թվականների կեսերին, երբ առավել քան ակներև դարձավ ցարիզմի բացասական դիրքորոշումը արևմտահայ ազատագրական շարժման նկատմամբ և Արևելյան Հայաստանում ուժեղացավ նրա հալածական քաղաքականությունը հայ ժողովրդի դպրոցական-եկեղեցական ինքնավարության հանդեպ:

**Երկրորդ ենթաբաժինում՝** «Հայկական հարցը XIX դարավերջի պատմագիտության մեջ», ներկայացված են 19-րդ դարի վերջին քառորդում Հայկական հարցի պատմության լուսաբանման ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները: հատկապես աչկառու գործունեություն ծավալեց նշանավոր պատմաբան Ալ. Երիցյանը: Մտածողության ազգային-քաղաքական ուրույն ուղեգիծն ընտրեց նաև պատմաբան և հրապարակախոս Ստ. Պալասանյանը: Երբ ռուս-թուրքական 19-րդ դարավերջի պատերազմի հետևանքով հրապարակ իջավ նաև արևմտահայության ազատագրության խնդիրը, Ստ. Պալասանյանը «Տասնիններորդ դարու նշանաբանը» ծրագրային իր հողվածում, ի գիտություն ընդունելով այն իրողությունը, որ եվրոպական մի շարք ժողովուրդներ ըմբոստանալով իշխող ազգերի դեմ, իրենց պայքարի փորձով ապացուցել են ժողովուրդների իրավահավասարության անհրաժեշտությունը, նրանց սովորությունների, իրավունքների հարգումը, գրում էր. «Այս գաղափարի յաղթանակը մենք տեսնում ենք Յունաստանի անկախութեան, Հունգարիայի ինքնավարութեան և Իտալիայի ու Գերմանիայի միութեան մեջ: Այսօր իսկ մեր աչքերի առաջ նոյն գաղափարը իրագործելու են ձգտում արևելեան քրիստոնեաները»<sup>28</sup>:

Հայկական հարցի լուծման որոնումների և քաղաքական կողմնորոշման խնդիրներում 1890-ական թվականներին՝ իր խմբագրած «Ամսափոս» պարբերականի էջերում ուշադրության արժանի հարցադրումներ է կատարել գրող և հրապարակախոս, պատմաբան, հասարակական և մշակութային ճանաչված գործիչ Արշակ Չոպանյանը /1872-1954/: Հայ ժողովրդի ազատագրական պայքարը համարելով արդարացի, «Եիշտ և բնական», նա 19-րդ դարի 90-ական թվականներին ասպարեզ իջած արևմտահայ հասարակական մտքի այն ներկայացուցիչներից էր, որն իր գործունեությունը ծառայագրեց թուրքական բռնատիրությունից հարազատ ժողովրդի ազատության նպատակին: Ա. Չոպանյանը քննադատական խոսք է հղել բոլոր նրանց դեմ, ովքեր այդ պայքարը փորձել են տանել ոչ նպատակասլաց ուղիով:

«Ապշեցուցիչ բան մըն է, - գրել է նա «Պատասխանատուները» ուսումնասիրության մեջ, - որ քսան տարի է ի վեր, ոչ մեկ հայ գաղափարն

<sup>27</sup> Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 11, Երևան, 1991, էջ 13-14:

<sup>28</sup> «Փորձ», 1877-1878, №1, էջ 143:

ունեցած չէ մանրամասնաբար քննել Բեռլինի վեհաժողովի միջոցին հայոց ծեռնարկած գործունեության պատմությունը: Եվ, սակայն, վիթխարի սխալներ գործած են այդ միջոցին և այդ սխալները երևան համելը պետք էր առաջինն ըլար մեր ջանքերուն»<sup>29</sup>: 19-րդ դարի 90-ական թվականների արևմտահայ իրականության մեջ Չոպանյանն առաջիններից էր, որ ամուր կանգնեց ռուսական կողմնորոշման դիրքերում: Հայկական հարցի պատմության ուսումնասիրման բնագավառում մեծ է բազմակատակ պատմաբան, հրապարակախոս, գրող, գրականագետ, պրոֆեսոր Լեոյի /Առաքել Գրիգորի Բաբախանյան, 1860-1932/ գիտական վաստակը: Լեոն աշխատել է վեր հանել ոչ միայն հայ ազատագրական պայքարի վերջին դարերի մանրամասները, այլև ուսումնասիրել է արևմտահայության ծանր կացության պատճառները, եվրոպական դիվանագիտության խարդավանքների արդյունքում միջազգայնացված Արևմտյան Հայաստանի հարցը: Նա գիտական տրամաբանության ուժով կռահել է Թուրքիան մեծ տերությունների կիսագաղութ դարձնելու մրցապայքարի արդյունքներով նրա հպատակ քրիստոնյա ժողովուրդներին, առաջին հերթին հայ ժողովրդին, սպասվելիք ահավոր աղետները: Լեոն էլ ունեցել է եվրոպական մեծ տերությունների խոստումները դյուրահավատորեն ընկալելու՝ հայ հասարակական-քաղաքական մտքի շատ ներկայացուցիչներին ուղեկցած սխալը:

20-րդ դարասկզբին հայ պատմահասարակագիտական մտքի բոլոր խոհեմ ներկայացուցիչներին Հայկական հարցի պատմությունն առավել քան ակնառու դարձրեց երկու եվրոպայի գոյության իրողությունը: Հայ պատմաբանների /այդ թվում նաև Լեոյի/ համար ակնբախ էր դառնում, որ կար ժողովրդի, ազնիվ հրապարակախոսների, հումանիստ գործիչների Եվրոպան, որը ձայն էր բարձրացնում բռնության դեմ, մամուլի էջերում մերկացնում թուրքական վանդալիզմի կատարած եղեռնագործությունները: Սակայն կար և մեծապետական շահերի համձնակատար պետական գործիչների Եվրոպան, որը մեծ հաշվեկատությամբ չափում ու ձևում էր աշխարհի քարտեզը և այդ հաշվարկներից ելնելով էր միայն կատարում իր հերթական, այդ թվում նաև՝ «հայասիրական» քայլերը:

Մեր առենախոսության համար օգտագործված գրականության մի զգալի մասը գերծ չէ պատմականության սկզբունքի կամայական մեկնաբանություններից: Դրա համար էլ ուսումնասիրված ժամանակաշրջանում ստեղծված պատմահասարակագիտական գրականության մեջ տեղ գտած միակողմանի լուսաբանությունն առարկայական ու հիմնավոր դարձնելու համար դիմել ենք արխիվային նյութերի և հասարակական-քաղաքական ամենատարբեր ուղղությունների պատկանող պարբերականների օգնությանը:

**Եզրակացություններում** հանրագումարի են բերված առենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

Պատմաբանների յուրաքանչյուր նոր սերունդ սկսում է առաջընթացի այն բարձրակետից, ուր կանգ է առնում նախորդը: Նոր սերունդն առաջ է տանում և զարգացնում նախորդի ստեղծագործ գաղափարներն ու տեսակետները: Սա է առաջընթացի շարունակականության, հաջորդայնության իմաստն ու բովանդակությունը: Առենախոսության մեջ ցույց ենք տվել

<sup>29</sup> «Անահիտ», Բարիզ, 1898, թիվ 3, էջ 87:



պատմության հիմնահարցերի լուսաբանման ուղղությամբ 19-րդ դարի վերջին քառորդի հայ պատմագիտական մտքի զարգացման հիմնական միտումները: Հարկ ենք համարել ընդգծել, որ զարգացման այդ միտումները հասան որակական նոր աստիճանի: Կարևորվել է այն ճշմարտությունը, որ յուրաքանչյուր ժողովրդի անցած ճանապարհը իմաստավորվում է ամենից առաջ նրա հոգևոր մշակույթի, այդ թվում անշուշտ նաև պատմագիտության մեջ: Ատենախոսության շարադրանքից դժվար չէ նկատել, որ մեր ուսումնասիրած ժամանակաշրջանի հայ պատմագիտությունը մի կապակցված և անընդմեջ ընթացքի մեջ է դնում անջատ-անջատ գոյություն ունեցող փաստերն ու երևույթները, տեսանելի դարձնում պատճառների ու հետևանքների ամբողջ շղթան և փորձում գիտականորեն դասակարգել օրինաչափությունները: Փորձել ենք հիմնավորել, որ անցյալի հայ պատմագրության նվաճումները յուրացրին և շարունակեցին զարգացնել Ղ. Ալիշանը, Ա. Գարագաշյանը, Գ. Սրվանձոտյանցը, Մ. Եմինը, Ստ. Պալասանյանը, Զ. Պատկանյանը, Ալ. Երիցյանը, Կ. Եգյանը, Գյուտ քահանա Աղանյանը և ուրիշներ: Հայ ժողովրդի հին և միջնադարյան, նոր պատմության հրատապ ու կենսական խնդիրների, համաշխարհային տարբեր անցքերի, դեպի ռուսական պետականության հետ համագործակցության տանող փոխհարաբերությունների, եվրոպական դիվանագիտության իսկական դեմքի, այլևայլ հարցերի գնահատականները մեծ նշանակություն են ունեցել պատմագիտության հետագա զարգացման համար:

19-րդ դարի վերջին երեք տասնամյակներում հայ հասարակական մտքի մեջ գերիշխող են դառնում ազգային-պահպանողական և լիբերալ-բուրժուական հոսանքները, հոսանքներ, որոնց գաղափարական ազդեցությունը նկատելի է նշված ժամանակաշրջանի համարյա բոլոր պատմաբանների վրա:

Չանտեսելով ինչպես եվրոպական, այնպես էլ ռուսական պատմագիտական մտքի ազդեցությունը, միաժամանակ ակնհայտ իրողություն է, որ հայ պատմագիտության առաջընթացը պայմանավորվել է նաև սեփական ազգային սերունդի, ավանդույթների և արդիականության պարզած խորհրդի կարևորման հենքի վրա /Մ. Եմին, Զ. Պատկանյան, Ա. Գարագաշյան, Գր. Խալաթյանց, Գարեգին Սրվանձոտյանց և ուրիշներ/:

Ժամանակաշրջանի պատմագիտական միտքն արտացոլող բազմաթիվ հրապարակումներ են պարունակում հայ մի շարք պարբերականներ /«Մեղու Հայաստանի», «Փորձ», «Արձագանք», «Մշակ», «Մուրճ», «Գործ», «Ազգագրական հանդես», «Լուսն», «Մասիս», «Հայաստան» /Լոնդոն/, «Արմենիա» /Մարսել/, «Անահիտ» և այլն:

19-րդ դարի վերջին տասնամյակներին անհամեմատ արգաստվոր էր ազգային-պահպանողական պատմագրությունը, որի ներկայացուցիչները պատմագիտության և հայագիտության բնագավառներում ստեղծեցին մնայուն արժեքներ: Շահական Պարսկաստանի տիրապետությունից Արևելյան Հայաստանի ազատագրումը և նրա միացումը Ռուսաստանին բախտորոշ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի պատմության մեջ: Նրա արևելյան հատվածի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման համար ստեղծվեցին համեմատաբար նպաստավոր պայմաններ: Վերաբնակեցվեց հայրենիքի այդ հատվածը, խաղաղվեց արևելահայերի ազգային կյանքը ֆիզիկական ոչնչացման և տարալուծման մշտական երկյուղի փարատումով: Չմայած Անդրկովկասում ցարիզմի վարած գաղութային քաղաքականության

բազմապիսի խոչընդոտներին և արգելակներին, հայ ժողովրդի արևելյան հատվածը դուրս էր գալիս պարսկական բռնատիրության շրջանի հետամնացության, անշարժության դարավոր թմբիրից և կատարում իր առաջընթացի նշմարելի քայլերը: Դանդաղորեն ծիլեր էր արձակում արևելահայ գրականությունն ու պարբերական մամուլը, քայլ առ քայլ ավելի բովանդակալից արտացոլելով կյանքի և գույքի անձեռնմխելիությունից օգտվող արևելահայության նոր կացության հակասություններն ու փոփոխությունները:

Ռուսական կայսրության կազմում հայ ժողովրդի կյանքում կատարվող սոցիալ-տնտեսական և մշակութային տեղաշարժերը, նրա հայրենիքի երկփեղկվածությունը ինչ-որ առումով խանգարում էր միասնական հայացքի տակ վերցնելու Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հիմնահարցը: Այդ հիմնահարցի լուսաբանմամբ 19-րդ դարի վերջին քառորդի պատմաբաններից զբաղվել են Ալ. Երիցյանը, Կարապետ Եգյանը, Ստ. պալասանյանը, Գյուտ քահանա Աղանյանը, Մ. Մամուրյանը, գրողներ Րաֆֆին, Ղ. Աղայանը, Պ. Պռոշյանը, հրապարակախոսներ Գր. Արծրունին, Աբ. Հովհաննիսյանը և ուրիշներ: Չնայած առանձին ծայրահեղ գնահատականներին, մասնավոր 1880-ական թվականներին, երբ ակներև դարձավ ցարիզմի բացասական դիրքորոշումը դեպի արևմտահայերի ազատագրական շարժումը և Արևելյան Հայաստանում ցարական հալածական քաղաքականությունը, ընդհանուր առմամբ հայ հեղինակները զոհ էին, որ ռուսական տիրապետությունը գրեթե ընդմիշտ վերացրեց հայերի ֆիզիկական ոչնչացման դարերից եկող երկյուղը:

19-րդ դարի 70-ական թվականներից հայ հասարակական մտքի և պատմագիտության շատ ներկայացուցիչների հետաքրքրել են Հայկական հարցի արծարծումները և արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների հետ կապված ամենաբազմազան խնդիրները, արևմտահայության նկատմամբ Թուրքիայում կիրառված ջարդերի քաղաքականությունը: 19-րդ դարի վերջին քառորդում ստեղծվեցին զգալի գրականություն, հարուստ գործերի հիման վրա գրվեցին մեծագրություններ, որոնցում իրադարձությունները մեկնաբանվել են տնտեսական, քաղաքական, դիվանագիտական և այլևայլ տեսանկյուններից, բացահայտվել Հայկական հարցի սկզբնավորման և նրա հետագա զործընթացի հայտնի ու զաղտնի նենգ դիտավորությունները: 19-րդ դարի վերջին տասնամյակների հայ պատմագիտական և հասարակական-քաղաքական մտքի գրեթե բոլոր ակնառու ներկայացուցիչները հանգել են այն ճշմարիտ գաղափարին, որ անցյալը պետք է նպաստի հասկանալու ժողովրդի ներկան, նրա կարիքներն ու խնդիրները, և համուն ներկայի ճիշտ գործելակերպի մշակման հարկավոր է անաչառ գնահատել պատմության անցուդարձերը, դեպքերն ու երևույթները: Նրանք այդ ելակետից են գնահատել եվրոպական տերությունների հակահայկական դիվանագիտությունը, տերություններ, որոնք 1894-1896 թվականներին արևմտահայությանը ոչ միայն չպաշտպանեցին թուրքական բարբարոսներից, այլև իրենք անմիջական մասնակիցը դարձան 1915-1916 թվականների հայոց ցեղասպանության նախապատրաստությանը: Այս է ատենախոսության վերջին գլխի գլխավոր եզրահանգումը:

Ատենախոսության ամփոփագրող եզրահանգումը հետևյալն է՝ պատմագիտության մեթոդի, տեսության և առհասարակ պատմական գիտելիքների դրսևորման առումով 19-րդ դարի վերջին քառորդն առաջընթացի

արդյունքներ արձանագրեց: Կարևորվել է այն իրողությունը, որ 19-րդ դարի 70-80-ական թվականներին հայ իրականության մեջ տեղի ունեցած խմորումները, ռուս-թուրքական պատերազմի հետ կապվող արևմտահայության ազատագրության արթնացող հույսերը, հայության երկու հատվածների համախմբման ձգտումը և կապիտալիզմի զարգացման ինտենսիվացումը իրենց կնիքը դրեցին պատմագիտության բովանդակության և նրա նոր դերի ըմբռման վրա: Ատենախոսության մեջ լուսաբանված հիմնահարցերն արդիական են և անանց արժեք ունեն ոչ միայն պատմաբանների, այլև ընթերցող լայն զանգվածների հայրենասիրական դաստիարակության համար:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Անտոն /Մադաթիա/ Գարագաշյանի պատմագիտական աշխարհը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Հայագիտական հանդես, №1(7), Եր., 2008, էջ 87-99:

2. Քերովբե Պատկանյանը որպես պատմաբան, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 53-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2008, էջ 231-234:

3. Ռուսական կողմնորոշման հիմնախնդիրը Կարապետ Եզյանի լուսաբանմամբ, Օրենք և Իրականություն, №12 (182), Եր., 2010, էջ 31-33:

4. Բաֆֆին և հայկական հարցը, ՀՊՄՀ գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2011, էջ 309-311:

## Армянская историография в последней четверти 19-го века

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 «Историография, источниковедение».

Защита состоится 13 июля 2012 г. в 14.<sup>00</sup>, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

### РЕЗЮМЕ

В диссертации исследуется развитие направлений армянской исторической мысли в последней четверти 19-го века.

Работа состоит из Введения, трех глав, Заключения и списка использованных источников и литературы.

**В Первой главе** диссертации показывается, что историографическое наследие таких выдающихся историков, как Г. Алишан, А.Гарагашян, Г.Срвандзтянц, М.Эмин, С.Паласанян, К.Патканян, А.Ерицян, К.Езян и др., представляет научный интерес как взаимосвязанное явление. Предметом исследований этих ученых были древняя, средневековая и новая история армянского народа, актуальные проблемы жизни армян в разных странах, взаимоотношения с Россией и другими государствами.

В последней четверти 19-го века в армянской историографии основными были национально-консервативное и либерально-буржуазное течения, которые охватили практически всех историков. Основанные на позитивизме, данные течения в армянской историографии по-новому исследовали возникновение и развитие общественных и социальных процессов. Такие идеи разделяли не только армянские историки, но и общественно-политические деятели Гр. Арцруни и Аб. Иоаннисян в своих историко-публицистических изданиях. Не отрицая как европейское, так и русское влияние, очевиден тот факт, что просвещение армянской мысли было основано на собственной национальной внутренней силе, традициях и актуальных проблемах (М. Эмин, К.Патканян, А.Гарагашян, Гр.Халатянц, Г. Срвандзтянц и другие).

**Во Второй главе** показано, что несмотря на то, что в Закавказье проводилась колониальная политика царизма, восточная часть армянского народа освободилась от восточной деспотии и вековой отсталости. Несмотря на отдельные крайние оценки в 1880-х гг. в целом армянские деятели считали, что правление русских навсегда избавило армян от векового угнетения. Последствием борьбы западных армян за самосохранение, воссоединение своей

страны и восстановление государственности стало возникновение Армянского вопроса.

С 70-х годов 19-го столетия многих представителей армянской общественной мысли и историографии интересовал Армянский вопрос и национально-освободительное движение.

В последней четверти 19-го века была создана значительная литература, основанная на богатом документальном материале. Были написаны монографии, в которых события освещены с экономической, политической точек зрения. Новые вопросы, возникшие в связи с освободительным движением и Армянским вопросом, пытались решить Ал.Ерицян, Ар. Чопанян, Раффи, Паронян, Хримян Айрик, Патканян, Церенц, Ав. Арасханян и многие другие.

В конце последнего десятилетия 19-ого века все известные представители армянской исторической и общественно-политической мысли пришли к тому верному выводу, что прошлое должно способствовать пониманию настоящего. Именно с этой позиции они оценивали поведение европейских государств с их антиармянской политикой, которая в 1894-1916 гг. не только не уберегла армян от турецкого гнета, но и стала непосредственным участником подготовки геноцида армян 1915-1916 гг. В этом и заключается главный вывод **Третьей главы** диссертации.

В конце 19-го века армянская историко-общественная мысль показала, что ни один исторический вопрос не имел столь трагической судьбы, как Армянский Вопрос. В таком состоянии “решение” Армянского вопроса переходит из 19-го века в 20-й.

**В Заключении** диссертации утверждается, что в 70-80 гг. 19-го века в армянской действительности зародились надежды на освобождение западных армян, связанные с русско-турецкой войной, началось сближение западных и восточных армян, что отразилось на содержании историографии. Национально-консервативное течение, более соответствующее общественно-политическому уровню жизни, на фоне развития капитализма уступает свое место либерализму. И приверженцы народности, и либералы были едины в одном принципе: народ должен быть един своим духом. Освещенные в диссертации вопросы актуальны и имеют ценность не только для узкого круга специалистов-историков, но и для более широкого изучения и воспитания нации.

## Abgaryan Armen Aramais

### Armenian Historical Thought During The Last Quarter of The 19<sup>th</sup> Century

Dissertation for the Degree of a Doctor of History on the specialization of  
“Historiography, source study” 07.00.05

The Defense of the Dissertation will be held on 13 July 2012, 14.<sup>00</sup> at the Session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

#### SUMMARY

Every new generation of historians starts at the zenith of progress where the previous generation has stopped. A new generation promotes and develops the creative ideas and viewpoints of the previous one. This is the meaning and content of progress continuity and succession. Connected to the elucidation of historical issues we have shown in the present thesis the main tendencies of the development of Armenian historical thought during the last quarter of the 19<sup>th</sup> century. It's easy to note that the historical science during the studied period connects and unites separate facts and phenomena, makes a whole chain of reasons and results visible and tries to classify regularities scientifically.

The work consists of an Introduction, three chapters, conclusions and the listing of the used sources and literature.

**In the First Chapter** we have tried to ground the fact that the achievements of Armenian Historiography of the past were adopted and continued to be developed by Gh. Alishan, A. Garagashyan, G. Srvandztyan, M. Emin, St. Palasanyan, K. Patkanyan, Al. Eritsyan, K. Ezyan, priest G. Aghayan and others. During the last three decades of the 19<sup>th</sup> century national-conservative and liberal-bourgeois tendencies become leading in the Armenian social thought. Their ideological influence is seen on almost all the historians of this period.

It is obvious that the progress of Armenian Historiography was conditioned by our own national potency, traditions and the importance of currency (M. Emin, A. Garagashyan, G. Srvandztyan, K. Patkanyan, Gr. Khlkhatyants and others), without rejecting the influence of Russian and European historical thought.

**The Second Chapter** is dedicated to investigation of the Social-economic and cultural movements in the life of the Armenians as a part of Russian Empire and cleavage of Armenia prevented the discussion of uniting East Armenia with Russia. In the last quarter of the 19<sup>th</sup> century this issue was elucidated by the historians Al. Eritsyan, St. Palasanyan, K. Ezyan, priest G. Aghayan, M. Mamuryan, writers Raffy,

Gh. Aghayan, P. Proshyan, publicists Gr. Artsruny, Ab. Hovhannisyan and others. The emergence of Armenian question and making the struggle of West Armenians international were the results of the struggle of West Armenians for preserving their existence, unity, becoming the master in their own country, restoration of statehood or just gaining self-governance.

In the Third Chapter we investigate the rich literature which was created in the last quarter of the 19th century. On the basis of rich facts were written monographs in which events were interpreted from economic, political, diplomatic and other various angles, there were discovered known and secret malicious intents concerning the Armenian question. Answers and solutions resulting from the Armenian liberation movement and the Armenian question were sought by K. Ezyan, Al. Eritsyan, St. Palasanyan, Ar. Chopanyan, Gr. Artsruny, Ab. Hovhannisyan, M. Mamuryan, Raffy, A. Arpiaryan, M. Portugalyan, R. Patkanyan, H. Paronyan, Khrimyan Hayrik, Tserents, Leo, A. Araskhanyan and many others. In the last decades of the 19th century all the prominent representatives of the Armenian historical and political-social thought came to the true idea that the past should contribute to the understanding of the nation's present, its needs and problems and it is necessary to assess the occurrences, events and phenomena of history without impartiality for constructing a right policy in present. They assessed the anti-Armenian policy of European countries from this angle. These countries not only didn't defend West Armenians from Turkish barbarians during 1894-1896 but also became immediate members in preparation of Armenian genocide during 1915-1916. This is the conclusion of the Third chapter of this thesis.

**The Conclusion** of the present thesis is the following:

The 19<sup>th</sup> century was marked by achievements as to the manifestation of historical method, theory and in general historical knowledge. The thesis gives importance to the idea that the discontents in the Armenian reality during 1870-1880s of the 19<sup>th</sup> century, the hopes about the liberation of West Armenians as a result of Russian-Turkish wars, the striving for unity of the two parts of the Armenians, the intensification of the development of capitalism has an influence on the content of historical science and a new approach to it. Both conservatives and liberals were of the same opinion about the general principle that the reflection of national spirit must be at a historical high. The issues elucidated in the thesis are current and are lasting values not only for historians but also for the cognitive-patriotic education of wide masses of readers.